ԳԼՈՒԽ Ա.

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ինչպէս կայծակը անամպ երկնքից, 1914 թուի յուլիսին, պայթեց համաշխարհային պատերազմը: Ազգեր ելան ազգերի դէմ: Աշխարհ իրար խառնուեց: Եւ քաղաքակրթութեան զարգացումն ու մարդկութեան յառաջադիմութիւնը կանգ առաւ երկար ժամանակով:

Պատերազմը ահաւոր փորձութիւն եղաւ ամբողջ երկրագնդի, բայց, մանաւանդ, հայ ժողովրդի համար: Նա բռնկուեց այն պահուն, երբ հայ—թրքական յարաբերութիւնների լարումը հասել էր ծայրայեղ աստիճանի, երբ հայը Թիւրքիայում նորից դարձել էր «խային» ազգ, «պետական դաւաճան», «կոյր գործիք մեծ պետութիւնների ձեռքին»...

Նոր էր ստորագրուել բարենորոգումների ծրագիրը: Օսմանեան սահմանադրութեան յաջորդող հայ—թրքական համերաշխութեան մեղրամիսը կարճ տևեց: Կիլիկիայի ջարդը, ներքին ճնշումները, կառավարութեան կասկածոտ վերաբերումը դէպի հայ տարրը, հողային հայակործան քաղաքականութիւնը Արևելեան վիլայէթներում, թիւրք ազգայնամոլութեան յարաճուն զարգացումը Իթթիհատի ծոցում — այս և ուրիշ բազմաթիւ պատճառներ վերջնապէս համոզեցին հայերին, որ առանց արտաքին օգնութեան, միա՛յն թիւրքական միջոցներով անկարելի է ձեռք բերել կեանքի բարելաւում: Եւ նորից ամենքի հայեացքը ուղղուեց դուրս՝ դէպի «մարդասէր Եւրոպան»:

Սահմանադրութեան օրերին ամբողջ թիւրքահայութիւնը, չնչին բացառութեամբ, կանգնել էր օսմանեան պետականութեան հողի վրա: Հ. Յ. Դաշնակցութիւնը, հայ ժողովրդի մեծագոյն կուսակցութիւնը՝ գործակցելով Իթթիհատի հետ՝ ձգտում էր իրականացնել համապետական նպատակներ: Երեսուն տարիների յեղափոխական մաքառումներից յետոյ, հայը անվերապահ կերպով դառնում էր օսմանեան քաղաքացի, հաւատարիմ տարր օսմանեան «վերածնուող հայրենիքի»: Ի՞նչ աւելի յարմար առիթ թիւրք դործիչների համար՝ օգտագործելու հայ ժողովրդի այս ինքնաբուխ զգացմունքները:

Մարտեան յետաշրջական օրերին հայ ժողովուրդը, մի մարդու պէս, ոտքի կանգնեց՝ պաշտպանելու համար հասարակաց հայրենիքն ու նոր ոէ-